ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87 Ա

<< 16 >> սեպտեմբեր 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 2532/11-Ա

Դրոշմանիշային վճարի գծով չկատարված պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկների՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության (ՀՎՀՀ՝ 05500249, հասցե՝ Շիրակ, Գյումրի, Կույբիշեվի փ., 3 պետ. գրանցման համարը՝ 29.140.00572) նկատմամբ 17.08.2021թ. հարուցված վարչական վարույթի շրջանակներում դրոշմանիշային վճարի գծով գանձման ենթակա պարտավորությունը կազմում է 624.500 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերության կողմից 12.08.2021թ-ին ներկայացված հուլիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկի արդյունքում դրոշմանիշային վճարի գծով առաջացել է 349.500 դրամ պարտավորություն, ինչի վճարման ժամկետը սահմանված է մինչև 20.08.2021թ-ը:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը կազմում է **275.000 ՀՀ** դրամ, որն առաջացել է 2021թ-ի հունիս ամսվա համար ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկից:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 59-րդ, 88-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲ ընկերությունից գանձել **275.000 ՀՀ** դրամ դրոշմանիշային վճարի գծով պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ ԻՎ հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման
ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Թեհմինե Միքայելյան, հեռ.011-54-91-91 /91-29/